ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

№ 1113-Ա « 25 » մարտի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի Հ.2047-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑԻ Հ.41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերության տնօրեն Լևոն Սարգսյանի դիմումը՝ Օրբելի փողոցի հ.41 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին.

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24122014-01-0166 վկայականը, 18.03.2025թ համաձայնագիրը՝ հողամասը պակաս չափերով սահմանները ճշտելու համար, Կադաստրի կոմիտեի 10.12.2024թ. հ.ԱՏ-10122024-01-1452 տեղեկանքը և «Ռուստամ Մաթևոսյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի տեղագրական հանույթը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Օրբելի փողոցի հ.41 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 16809.33քմ՝ վկայականում ամրագրված 17863.0քմ մակերեսի փոխարեն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցման սխեմայի, հողամասը գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 3-րդ գոտում:

Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը /ըստ պայմանական նշանների/ գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-164913-24 եզրակացությունը.

1.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2004 թվականի հոկտեմբերի 27-ի հ.2047-Ա որոշումը և 5475-2004 հողամասի հատակագիծը:

2.Սահմանել, որ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետա-զոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Օրբելի փողոցի հ.41 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 16809.33քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3.Ընդունել ի գիտություն, որ քննարկվող հողամասում ներբակային ճանապարհների նկատմամբ առկա է գրանցված սերվիտուտի իրավունք /հիմք՝ Երևանի քաղաքապետի 19.07.2013թ. հ.01/18-39272 և 26.11.2014թ. հ.01/18-66720 գրությունները և Կադաստրի կոմիտեի 18.03.2025թ. հ.ԱՏ-18032025-01-1006 տեղեկանքը/, որից որպես մոտեցման միակ ճանապարհ օգտվում են հարևան բնակելի տների ու շենք, շինությունների սեփականատերերը:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246